այրին մէջ՝ ուր էր Մանուկը իր մուրին մէջ դրուած, կեցաւ Անոր գլխուն վրայ, և տեսան մոգերը ու հովիւները երկրպագութիւն ըրին Անոր։ Այդ խորհուրդին պատճառաւ՝ լոյսով կը մտնենք եկեղեցին և կը կատարենք տօնը»։

Անվաւեր գրոց համաձայն՝ կ'աւանդուի նաև թէ աստղը ունէր փոքր տղու մը ձևը, իր վրայ ունենալով խաչ մը և որ խօսած է մոգերուն հետ (Bru. էջ 100)։

Ուխտաւոր հայ քահանայ մը 1711 - 1712 ընտանեօք ուխտի կուգայ Երուսաղէմ և իր ուխտագնացութիւնը գրի առնելով կը յիշէ պատմական և աւանդական դէպքեր։ Ս. Ծննդեան աւանդութեան մասին ալ ունի սա տողերը. «Եւ Ծննդեան (վանքին) վրայ ղուրշին ղափլը, և սորա մէջտեղը սիւն մի և ի գլուխ սեանն մեծ աստղ մի չինած, որ ի գալն մոգուց թագաւորաց աստղ անդ դադարեր է, նորա համար նշան զայն եղեալ են եւ վերայ ի ղուրշինն յիսուն եափրախ է» (Բազ. 1868, էջ 118)։

Մոգերուն եւ հովիւներուն երկրպագութիւնը. — Նոր կտակարանի անվաւեր գրոց մէջ «Մոգերու երկրպագութիւնը» ընդարձակօրէն գրուած է. «Վասն զարդաստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին Մանկանն Յիսուսի» ԺԱ. գլուխէն կը քաղենք մոգերու մասին ինչ ինչ հատուածներ. «. . . Ահա մոգք յարևելից՝ որք ելեալ էին յաշխարհէն իւրեանց եւ բազում զօրօք եկեալ հասեալ նոցա ի քաղաքն Երուսաղէմ զամիսս ինն, և էին թագաւորք մոգուցն երեք եղբարք ի միասին։ Առաջին թագաւորն Մելքոն էր Պարսից, երկրորդ թագաւորն Հնդկաց Գասպար